

Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական
միջազգային կենտրոնի տնօրեն
_____ Ա. Սարգսյան

Հաշվետվություն

2018թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի

Ներգնա և արտագնա շարժունություն

- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի դասախոս և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի Մենդի շղթայի ռիսկերի գնահատման կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար Մելինե Բեգլարյանը 2018թ. փետրվարի 21-ից մինչև մարտի 9-ը գործնական այցով գտնվել է Տուշայի համալսարանում (Իտալիա): Բջջային ու մոլեկուլային սնուցման լաբորատորիայի ղեկավար պրոֆեսոր Նիկոլո Մերենդինոյի հետ իրականացվել է համատեղ գիտական հոդվածի խմբագրման աշխատանքներ, որը ընդունվել է տպագրման միջազգային ինդեքսավորված ժողովածու: Մ. Բեգլարյանը Տուշայի համալսարանում մասնակցել է պրոֆեսոր Ն. Մերենդինոյի՝ մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացներին, որոնք նվիրված էին սննդագիտության հիմունքներին, ինչպես նաև մարդկանց առողջարար սննդակարգում ֆունցիոնալ սննդամթերքի դերին և նշանակությանը: /Ընդհանուր թիվը՝ 1 ՊԿ/
- Ա.թ. ապրիլի 10-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի նախաձեռնությամբ Էրազմուս+ դասախոսների շարժունությամբ Հայաստան ժամանած Լեհաստանի Դաբրովա Գուրնիչա համալսարանի Անվտանգության և ճգնաժամի կառավարման դեպարտամենտի ղեկավար Պաուլինա Պոլկոն հանրային դասախոսություն վարեց ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների համար՝ ներկայացնելով Լեհաստանի, Գերմանիայի, Շվեդիայի և Չեխիայի հանրապետության փորձի ուսումնասիրությունը տեղեկատվական պատերազմի գործընթացում, ինչպես նաև սոցիալական մեդիայի կիրառումը ահաբեկչական կազմակերպությունների կողմից: /Ընդհանուր թիվը՝ 1 ՊԿ/
- 2017-2018 ուս տարվա երկրորդ կիսամյակում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ամբիոնի 6 մագիստրանտ



Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ փոխակրթական
միջազգային կենտրոնի տնօրեն
Է. Սարգսյան

Հաշվետվություն

2018թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի

Ներզնա և արտազնա շարժունություն

- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի դասախոս և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի Սննդի շղթայի ռիսկերի գնահատման կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար Մելինե Բեգլարյանը 2018թ. փետրվարի 21-ից մինչև մարտի 9-ը գործնական այցով գտնվել է Տուշայի համալսարանում (Իտալիա): Բջջային ու մոլեկուլային սնուցման լաբորատորիայի ղեկավար պրոֆեսոր Նիկոլո Մերենդինոյի հետ իրականացվել է համատեղ գիտական հոդվածի խմբագրման աշխատանքներ, որը ընդունվել է տպագրման միջազգային ինդեքսավորված ժողովածու: Մ. Բեգլարյանը Տուշայի համալսարանում մասնակցել է պրոֆեսոր Ն. Մերենդինոյի՝ մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացներին, որոնք նվիրված էին սննդագիտության հիմունքներին, ինչպես նաև մարդկանց առողջարար սննդակարգում ֆունցիոնալ սննդամթերքի դերին և նշանակությանը: /Ընդհանուր թիվը՝ 1 ՊԿ/
- Ս.թ. ապրիլի 10-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի նախաձեռնությամբ Էրազմուս+ դասախոսների շարժունությամբ Հայաստան ժամանած Լեհաստանի Դաբրովա Գուրնիչա համալսարանի Անվտանգության և ճգնաժամի կառավարման դեպարտամենտի ղեկավար Պաուլինա Պոլկոն հանրային դասախոսություն վարեց ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների համար՝ ներկայացնելով Լեհաստանի, Գերմանիայի, Շվեդիայի և Չեխիայի հանրապետության փորձի ուսումնասիրությունը տեղեկատվական պատերազմի գործընթացում, ինչպես նաև սոցիալական մեդիայի կիրառումը ահաբեկչական կազմակերպությունների կողմից: /Ընդհանուր թիվը՝ 1 ՊԿ/
- 2017-2018 ուս տարվա երկրորդ կիսամյակում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ամբիոնի 6 մագիստրանտ

ուսանել են Ֆրանսիայի Փոլ Սաբատիեի (Տուլուզ 3) համալսարանում:

- 2017-2018 ուս տարվա երկրորդ կիսամյակում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Գործարար վարչարարության» ամբիոնի 3 մագիստրանտ ուսանել են Իտալիայի Տուշայի համալսարանում:
- 2018-2019 ուս տարվա առաջին կիսամյակում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ամբիոնի 4 մագիստրանտ ուսանել են Ֆրանսիայի Փոլ Սաբատիեի (Տուլուզ 3) համալսարանում:
- 2018-2019 ուս տարվա առաջին կիսամյակում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի 1 մագիստրանտ ուսանել է Իտալիայի Տուշայի համալսարանում:
- 2018թ. ապրիլի 22-28-ը պաշտոնական այցով գործուղվել են Իտալիայի Տուշայի համալսարան ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատվիրակությունը /Ընդհանուր թիվը՝ 5 – 3՝ ՎԿ, 2՝ ՊԿ/:
- «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի դասախոսներ ա.գ.թ.-եր Շուշանիկ Ասմարյանը և Վահագն Մուրադյանը 2018թ. մայիսի 6-12-ը գործուղվել են Իտալիայի Տուշայի համալսարան, որտեղ Հայաստանի վերաբերյալ դասախոսություններ կարդացին հետևյալ թեմաներով՝ «Էկոլոգիական խնդիրների լուծման ուղղությամբ հեռազննման և ԱՏՀ տեխնոլոգիաների կիրառումը», «Լանդշաֆտային պլանավորում», ինչպես նաև «Տարածական տեղեկատվական ենթակառուցվածքներ և կառավարում»/ 2 ՊԿ/:
- 1 վարչական անձնակազմ՝ Ռենատո Զոմպանտի, Իտալիայի Տուշայի համալսարան, որն իր այցի ընթացքում աջակցություն է ցուցաբերել գիտական հետազոտության իրականացման մեթոդաբանության և սարքավորումների կիրառման առումով:
- 2018թ. նոյեմբերի 14-ին և 15-ին Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի պրոֆեսոր Դանիել Հագիմոնթը դասախոսություն է կարդացել ԳԿՄԿ ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնում՝ նվիրված ամպային հաշվարկներին և մեծ տվյալներին /1 ՊԿ/:
- 2018թ. նոյեմբերի 22-ին Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի դոկտոր Զորջ դա Կոստան դասախոսություն է կարդացել ԳԿՄԿ ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնում /1 ՊԿ/:
- 2018թ. դեկտեմբերի 11-14-ին Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի պրոֆեսոր Ի. Օբերը դասախոսություն է կարդացել ԳԿՄԿ ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնում /1 ՊԿ/:

- 2018թ. դեկտեմբերի 18-ին և 20-ին Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի պրոֆեսոր Զ. Մոթը դասախոսություն է «Մեքենայական ուսուցում» թեմայով/1 ՊԿ/:
- 2018թ.-ի ընթացքում ԳԿՄԿ ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոն 7 դասախոս այցելել են Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտ:

ԳԱՑ ցուցանիշ 6.1. Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների թիվը

	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Պայմանագրերի թիվը	8	10	13	14	18	25	24*
Գործուղումների թիվը ըստ գործընկերների	4	2	12	1	6	11	15

***3 փոխըմբռնման հուշագիր անվավեր են ճանաչվել**

ԳԱՑ ցուցանիշ 6.2 Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ

	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ	1	0	1	0	9	12	6

Ցուցանիշ 6.3 Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվը

	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվ	0	0	0	0	8	3	14

Բաժնի կողմից մասնակցած միջոցառումներ

- ԱՄՆ պետ. դեպարտամենտի ֆինանսավորմամբ 2018թ. հունվարի 29-ից փետրվարի 16-ը ԱՄՆ-ում տեղի ունեցավ «Կրթությունը թվային դարաշրջանում» բազմատարածաշրջանային միջազգային առաջնորդության ծրագիրը, որտեղ Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում էր ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը: Ծրագրի նպատակներն էին կրթության ոլորտում ընթացիկ տեխնոլոգիական միտումների ներկայացումը, նոր տեխնոլոգիաների ազդեցությունը ուսումնառության վրա, ներառյալ՝ առավելություններն ու թերությունները, ինչպես նոր տեխնոլոգիաները ինտեգրել ուսումնական գործընթացում և ուսումնասիրել ուսումնական հաստատությունների և մասնավոր հատվածի գործընկերությունների օրինակները:
- 2018թ. մարտի 30-ին Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ 20 հայկական բուհերի միջազգային կապերի բաժինների ներկայացուցիչների հերթական աշխատանքային հանդիպումը, որին մասնակցեց նաև ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը:
- Ս.թ. նոյեմբերի 6-ին և 7-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում տեղի ունեցած հերթական էրազմուս+ տեղեկատվական օրերին Հայաստանում: Դավիթ Պիպոյանը ներկայացրեց ԳԱԱ ասպիրանտական փոխանակման հաջողված ծրագրերը:
- Արտաքին կապերի բաժին պետի նախաձեռնությամբ, ԳԿՄԿ-ն մասնակցեց Կարիերայի և ձեռնարկատիրության տոնավաճառին կազմակերպված ԱՄՆ դեսպանատան կողմից Ձեռներեցության համաշխարհային շաբաթվա (Global Entrepreneurship Week - GEW) 2018թ. միջոցառումների շրջանակում՝ ներկայացնելով կենտրոնի գործունեությունն ու հեռավար Գործարար վարչարարություն կրթական ծրագիրը:
- 2018թ. դեկտեմբերի 20-ին Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (ԱՓՇԱՏԿ) տարբեր բուհերի ներկայացուցիչների համար կազմակերպել էր դասընթաց օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրների և այդ ուղղությամբ իրականացվող քաղաքականության վերաբերյալ, որին մասնակցում էր նաև ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը:

Բաժնի կողմից կազմակերպված միջոցառումներ

- 2018թ. ապրիլի 9-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի նախաձեռնությամբ ԳԿՄԿ վարչական անձնակազմը հանդիպեց էրազմուս+ դասախոսների շարժունությամբ Հայաստան ժամանած Լեհաստանի Դաբրովա Գուրնիչա

համալսարանի Անվտանգության և ճգնաժամի կառավարման դեպարտամենտի ղեկավար Պաուլինա Պոլկոյի հետ, որը ներկայացրեց Դաբրովա Գուրնիչա համալսարանը, առաքելությունը, միջազգայնացման գործընթացը և մասնագիտությունները: Կողմերը քննարկեցին ապագա համագործակցության ուղիները և համատեղ ծրագրերի իրականացման տարբերակները:

- 2018թ. մայիսի 14-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ համագործակցության համաձայնագրի հանդիսավոր ստորագրումը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի և Նովոսիբիրսկի պետական մանկավարժական համալսարանի միջև: Համաձայնագրի հանդիսավոր ստորագրումից հետո տեղի ունեցավ գիտատեղեկատվական հանդիպում-քննարկում ԳԿՄԿ համապատասխան վարչակազմի և ամբիոնների վարիչների մասնակցությամբ:
- 2018թ. մայիսի 18-ին ավարտվեց միջին մակարդակի խմբի վերապատրաստման դասընթացը, որին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի տարբեր ամբիոնների դասախոսներ: Դասընթացը վարում էր ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի արտաքին կապերի բաժնի պետ, անգլերենի դասախոս Արուսյակ Հարությունյանը: Տվյալ դասընթացը առավելապես նպատակաուղղված էր զարգացնելու մասնակիցների հաղորդակցական, ինչպես նաև լսողական, ընթերցողական և գրելու կարողությունները: Դասընթացը հաջողությամբ ավարտած մասնակիցներին շնորհվեցին մասնակցության՝ երկու կրեդիտատարությամբ հավաստագրեր:
- 2018թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ, անգլերենի դասախոս Արուսյակ Հարությունյանը վերապատրաստում անցկացրեց Օտար լեզուների ամբիոնի դասախոսների համար: Վերապատրաստման ընթացքում Արուսյակ Հարությունյանը ներկայացրեց քննական դատողության սկզբունքներն ու դրանց կիրառումը օտար լեզվի դասավանդման գործընթացում:
- Հայաստանի ակադեմիական գիտահետազոտական կոմայուտերային ցանցը (ASNET-AM) ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի աջակցությամբ մասնագիտական անգլերենի անվճար առցանց դասընթաց անցկացրեց ASNET-AM-ի անդամ կազմակերպությունների համար:

Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագիր

MODERNIZATION OF ENVIRONMENT PROTECTION STUDIES PROGRAMMES FOR ARMENIA AND GEORGIA (MENVIPR)

Առաջիկա երեք տարվա Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում ԳԿՄԿ-ում լիովին արդիականացնելու են «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի հիմնական դասընթացների առարկայական նկարագրերը միջազգային գործընկերների

խորհրդատվությամբ և ուղղորդմամբ, ինչպես նաև ներդրվելու են միջազգային պահանջարկ ունեցող նոր առարկաներ, ստեղծվելու է Հայաստանում առաջին գիտակրթական լաբորատորիան «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությամբ ուսանողների համար:

Կնքված նոր հուշագրեր և համաձայնագրեր

Միջազգային հուշագրեր և համաձայնագրեր

- Փոխըմբռնման հուշագիր Դիսբուրգ Էսեն համալսարանի հետ, Գերմանիա
- Համագործակցության համաձայնագիր Նովոսիբիրսկի պետական մակավարժական համալսարանի հետ, ՌԴ
- Երկկողմանի համագործակցության համաձայնագիր Դոմբրովա-Գուրնիչա համալսարանի հետ, Լեհաստան
- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնը գիտական և կրթական համագործակցության համաձայնագիր է ստորագրել Լեհաստանի Կրակովի մանկավարժական համալսարանի աշխարհագրության և կենսաբանության ֆակուլտետի հետ
- Միջ-ինստիտուցիոնալ համագործակցության համաձայնագիր Լեհաստանի Կրակովի մանկավարժական համալսարանի հետ:

Ներպետական հուշագրեր, պայմանագրեր և համաձայնագրեր

- Համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ

Մշակված փաստաթղթեր

- Մշակվել է Իտալիայի երկարաժամկետ և կարճաժամկետ, Ֆրանսիայի երկարաժամկետ և Ավստրիայի կարճաժամկետ վիզաների դիմելու մանրամասն հուշաթերթիկներ՝ համաձայն շարժունության երկրների:

Հաշվետու տարում բաժինը՝

- պատրաստել, թարգմանել և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ վերկայքում է տեղադրել 24 նորություն և 43 հայտարարություն, որը կազմում է ԳԿՄԿ վերկայքում տեղադրված նորությունների և հայտարարությունների առավել քան 50%-ը:
- օժանդակել է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ հանդիսացող ԳԱԱ 1 ասպիրանտ և ուսանողի 1 ընտանիքի անդամի համար ՀՀ-ում բնակվելու մեկ տարվա ժամանակավոր կացության

կարգավիճակ ստանալու հետ կապված հարցերում:

- աջակցություն է ցուցաբերել ինչպես Էրասմուս+ ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ից Ֆրանսիա և Իտալիա մեկնող ուսանողների (մագիստրատուրա և ասպիրանտուրա) երկարատև վիզաների ձեռք բերման գործընթացին, այնպես էլ աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների համար կարճաժամկետ վիզաների ձեռք բերման գործընթացին /Ընդհանուր թիվը՝ 26/:

Դասախոսական անձնակազմի օտար լեզվի վերապատրաստումների կազմակերպում /ԲՊ/

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի բարելավման պլանի շրջանակներում ս.թ. հունվար և փետրվար ամիսներին ՀՀ ԳԱԱ օտար լեզուների ամբիոնը ՀՀ ԳԱԱ Որակի ապահովման բաժնի կողմից անցկացված հարցման արդյունքների հիման վրա անցկացրեց պրոֆեսորադասախոսական կազմի (այսուհետ՝ ՊԴ կազմ) օտար լեզվի /անգլերեն/ թեստավորում՝ 2 փուլով: Նախնական հայտի դիմորդների քանակն 86 էր, թեստավորվեց 42 դիմորդ, սերտիֆիկացվեց 34 դիմորդ: Արդյունքների հիման վրա ձևավորվեցին 4 տարբեր լեզվական մակարդակ ունեցող խմբեր: Վերապատրաստմանը հատկացվեց 60 ժամ, որից 30-ը՝ լսարանային, 30-ը՝ ինքնուրույն (2 կրեդիտ):